

ՆԱԽԱԳԱՐ ԲՈՂԱՐԵԱՆ ՑԱՒԱԿՑԱԳԻՐ ՅՂԱԾ Է ՓՈՒԹՆԻՒՐ
ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԹԻՐԻՆ ԶԱՆԶԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան ցուցակագիր մը յղած է իր ռուս պաշտօնակիցին՝ Վլատիմիր Փոլոնինի: Հայրենի դեկապրը իր եւ ամբողջ հայ ժողովուրդին անունով ցուցակագիր կը յայտնէ 132 պիւնտր փոխարող Չեչենիոյ մէջ շախախուած ռուսական ռազմական «ՄԻ. 26» ուղղաթիռին ողբերգութեան համար:

Նշենք, որ 114 պիւնտրներ վոյ գացին շախախուածին, որուն պատճառը թէ եւ պաշտօնապէս ցարդ հաստատուած չէ, սակայն շատ մեծ հաւանականութիւն կայ, որ անիկա հետեւանք է չեչենեան կողմէ հրթիռարձակումի:

Այսօր, նախագահ Փոլոնին ազգային սուգի օր հռչակած է ամբողջ երկրին տարածքին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն երէկ հրապարակեց լիբանանեան մամուլին ուղղուած հետեւեալ հաղորդագրութիւնը.

Երէկ յետմիջօրէին, Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Հալէպ, ուր տեսակցութիւն մը ունեցաւ Սուրիոյ նախագահ տոքթ. Պաշշար Ասատի հետ: Պատուիրակութեան մաս կը կազմէին Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Միխայիլեան եւ Կեդրոնական Կոմիտէի անդամներ Յոլակ Թիւթեյեան եւ Ստեփան Տէր Պետրոսեան, ինչպէս նաեւ՝ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար տոքթ. Սեպուհ Յովսէփեան:

Մօտ մէկուկէս ժամ տեւած հանդիպումին ընթացքին քննարկուեցան Լիբանանի եւ Սուրիոյ եղբայրական յարաբերութիւններուն կապուած հարցեր, ինչպէս նաեւ՝ երկու կողմերը յուլող խնդիրներ եւ շրջանային կացութիւնը:

Այս առիթով նախագահ Ասատ վերահաստատեց անհրաժեշտութիւնը՝ կառչած մնալու Լիբանանի մէջ օրինականութեան ու պետական հաստատութիւններուն եւ հաստատեց կարեւորութիւնը՝ յարգելու լիբանանեան համայնքներուն բոլոր իրաւունքները: Ան դրուատեց բոլոր հանգրուաններուն՝ հայ համայնքին որդեգրած կեցումներն ու Լիբանանի եւ Սուրիոյ հայ համայնքներու դերակատարութիւնը:

Լիբանանեան եւ սուրիական յարաբերութիւններու քննարկումի ծիրէն ներս նախագահ Ասատ հաստատեց իր ամբողջական եւ անվերապահ յանձնառութիւնը իտէլայ մակարդակի հասցնելու այս յարաբերութիւնները, որոնք պէտք է ապահովեն երկու երկիրներուն շահերը:

Նաեւ արժարձուեցաւ Թաէֆի համաձայնութիւնն ու անոր ոգին եւ հիմնական սկզբունքները յարգելու հրամայականը, նկատի ունենալով, որ ան է Լիբանանի քաղաքացիական պատերազմին վերջ դրած եւ Լիբանանի վերականգնումը կարելի դարձուցած հիմնական ազդակը:


Նախագահ Ասատ հետաքրքրութիւն եւ հասկացողութիւն ցուցաբերեց Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութեան արժարձած բոլոր հարցերուն նկատմամբ, եւ այդ հարցերուն քննարկումը ընթացաւ դրական մթնոլորտի մէջ: Երկու կողմերը համաձայնեցան շարունակելու իրենց հանդիպումներն ու խորհրդակցութիւնները:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

21 Օգոստոս 2002
Պէյրուս

ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԻ ՍԸ ԸՆԹԱՅՔԻՆ

ԻՐԱՔ ՊԱՇՏՕՆԱՊԵՍ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԱՊՈՒ ՆԻՏԱԼԻ ՄԱՇՈՒԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Իրաքեան գաղտնի սպասարկութեան պետը՝ Թահեր Ժալիլ Հապուլը կը ցուցադրէ Ապու Նիտալի դիակին լուսանկարները

Ֆաթհ Յեղափոխական խորհուրդը կազմակերպութեան ղեկավար Ապու Նիտալ անձնասպանութիւն գործեց, երբ իրաքեան ապահովութեան ուժեր մտան անոր բնակարանը՝ զայն ձերբակալելու համար, յայտնեց գաղտնի սպասարկութեանց պաշտօնատար մը երէկ:

Թահեր Ժալիլ Հապուլը մամուլը ասուելիս մը ընթացքին ըսաւ, որ Ապու Նիտալ պիտի ձերբակալուէր եւ դատաւարութեան ենթակուէր՝ ապօրինի կերպով իրաք մտած ըլլալուն համար: Ան աւելցուց, որ երբ ապահովութեան ուժերը մտած են բնակարանը, Ապու Նիտալ խուսափելու համար ձերբակալութենէն, առըրճանակը բերին մօտեցրնելով կրակած ու անձնասպան եղած է: Հապուլը ցոյց տուաւ նկարներ արիւնլուայ վիճակի մէջ գտնուած Ապու Նիտալի: Ան թղթակիցներու ցուցադրեց նաեւ շարք մը կեղծ անցագրերներ, որոնք գտնուած են Ապու Նիտալի Պաղատար բնա-

կարանին մէջ: Հապուլը ներկաներուն յանձնեց նաեւ նկարներ գէնքերու եւ գինամթերքի, գորս գտած էին բնակարանին մէջ: Հոն գտնուած են նաեւ ականներով լեցուցն ութ պայուսակներ: Հապուլը յայտնեց նաեւ, որ Ապու Նիտալի բնակարանէն գտնուած են փաստաթուղթեր, որոնք ցոյց կու տան, թէ պաղատարիցի ղեկավարը ամսական կը ստանար օտար երկիրէ մը: Հապուլը չըսաւ երկիրն անունը: Ան չըսաւ նաեւ, թէ Ապու Նիտալ երբ անձնասպան եղած է: Պաղատարեան աղբիւրներ յայտնած էին,

որ դիակը գտնուած է երկուշաբթի օր եւ թէ ան քանի մը օրուան մեռած էր:

Հապուլը ըսաւ, որ երբ ապահովութեան ուժերը Ապու Նիտալի ըսած են, թէ գինք հարցաքննութեան պիտի տանին, ան նախ համաձայնած է, ապա՝ սենեակ մը մտնելով դուռը գոցած է ու քանի մը վայրկեան ետք լսուած է ատրճանակի ձայնը: Ապու Նիտալ հիւանդանոց փոխադրուեցաւ, սակայն ութ ժամ ետք մահացաւ, աւելցուց Հապուլը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՉՈՐՍ ՀԱՅԱՍՏԱՆԱԳՊԱՏԱԿՆԵՐ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ՝ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՀԱՇՈՒՈՅՆ ԼՐՏԵՍԵԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

Հայաստանի գաղտնի սպասարկութիւնը ձերբակալած է չորս հայաստանցիներ, որոնք կը լրտեսէին Արաբիանի հաշուոյն:

Հայաստանի Հանրապետութեան քրէական օրէնագիրքի 59րդ յօդուածին համաձայն՝ անոնք կը նկատուին հայրենիքի դաւաճաններ:

Չերբակալելուներուն ինքնութիւնը առայժմ չի յայտարարուիր: Կենթադրուի, որ անոնք բոլորն ալ լրտեսական միեւնոյն ցանցի անդամներ են եւ ձերբակալուած են տարբեր վայրերու մէջ եւ տարբեր օրերու ընթացքին: Ըստ Հայաստանի Անվտանգութեան մարմիններուն՝ չորս դաւաճանները Արաբիանի յատուկ ծառայութեանց գործակալներ են:

«ՊԱՐՈՆ ՏԵՐ»-Ի ՀԱՐՑՈՎ

ԱԼԵՔՍԷՅ Բ. ԵՒ ՃՈՐՃ ՔԵՐԻ ԿԸ ԶՕՐԱԿՅԻՆ ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

Մոսկուայի եւ համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսէյ Բ. եւ Քենթրալըրիի արքեպիսկոպոս Ճորճ Քերի պորակցութիւն կը յայտնեն Երուսաղէմի հայոց պատրիարքութեան՝ «Պարոն Տէր» հայապատկան կայուածներու բռնագրաման դէմ բողոքին: Չոյգ կրօնապետերը մտահոգութիւն յայտնած են Իսրայէլի կողմէ հայապատկան սրբավայրերու բռնագրաման համար եւ պորակցութիւն կը յայտնեն՝ հարցին բարոյ լուծման գործընթացին:

Արդէն շուկային վրայ է միջազգային հռչակ վայելող հայկական «KOTAYK» գարեջուրը: «KOTAYK» գարեջուրը շահած է 3 ոսկի մետալներ՝ ՍՈՉԻ, ՄԱՏՐԻՏԻ եւ ՄՈՍԿՈՒԱՅԻ միջազգային փառատօներուն ընթացքին, իսկ Նիւ Եորքի մէջ տիրացած է «PLATINUM» մետալին: «KOTAYK» գարեջուրը կրնաք գտնել բոլոր սիւվորմարքեթներուն եւ նպարավաճառներուն մօտ: Սեփական վաճառքի համար կրնաք դիմել «UNIVERSE» հաստատութեան կամ ցրուիչ «VAK TRADING COMPANY»-ի: Հասցէ՝ Պուրճ Համուտ, Փօլիկարպոս, «Սարդարապատ» շէնք: Հեռաձայն՝ 03/626177, 03/773609:

Ընդհանուր ներկայացուցիչ Լիբանանի մէջ «LEBARCO» ընկերութիւն «LEBANESE ARMEAN COMMERCIAL COMPANY»:

Ծանօթ: Սիրութեանկան ձեռնարկներու համար՝ մասնաւոր գեղջ:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎ ՆԱՆԵԱՆ ԱՅՅԵԼԵՅ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսէփեան երէկ այցելեց հանրապետութեան նախագահ գօր. Էմիլ Լահուտի եւ անոր առաջարկեց հովանաւորել «Աղբալեան- Հ.Մ.Ը.Մ» մարզամշակութային համալիրի բացման հանդիսութիւնը, որ տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 28ին: Նախագահ Լահուտտուս իր համաձայնութիւնը:

Նախարար Յովսէփեան նախագահ Լահուտի ներկայացուց Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակու-



թեան եւ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի միջեւ Հալէպի մէջ կայացած տեսակցութեան արդիւնքները եւ հանդիպումին ընթացքին քննարկուած լիբանանեան եւ շրջանային հարցերը:

Նախարար Յովսէփեան նաեւ արժարձեց իր նախարարութեան վերականգնողական աշխատանքները եւ ծրագրները, ինչպէս նաեւ՝ շրջանային եւ միջազգային մրցաշարերու Լիբանանի մասնակցութիւնը:

ԱՅՀԻԼ AFHIL

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ
ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

• Over Bed Table
• All Kinds Of Oxygen
We Also Provide
• Laboratory services
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)

ՑՈՒՑԱՐԱՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐԸ
ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆՔ, Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. (02) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.**

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Թ. Օգոստոսի 19ին Լիբանանում Հայաստանի դեսպանությունը այցելեցին Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակեանը՝ տիկնոջ՝ Վերա Սեդրակեանի (Նապարեան), դստեր՝ Լարայի հետ և ընկերակցությամբ ազգային գործիչ, մեծ բարերար, Լիբանանում Հայաստանի դեսպանության ներկայիս շեֆ Գրիգոր Սուլաքյան Նուպար Նապարեանի այրու՝ տիկին Անահիտ Նապարեանի:

Հիւրերին ընդունեցին Լիբանանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արեգ Յովհաննիսյանը, տիկինը՝ Նարինե Յովհաննիսյանը և վարակր:

Հանդիպման ընթացքում քննարկուեցին Հայաստան - Սփիւռք լարաբերությունների ներկայ մակարդակը, Հ. Բ. Ը. Մ.ի կողմից Հայաստանում և Սփիւռքում իրականացող ծրագրերը և նրանց հեռանկարները, ընդհանուր քաղաքական և տարածաշրջանային խնդիրներ, Լիբանանում Հայաստանի դեսպանության գործունեությունը, ծրագրերը, ինչպես նաև շեֆի պահպանմանը առնչուող հարցեր:

Դեսպանը, երախտագիտության խօսքեր լողելով Նապարեան ընտանիքին և Հ. Բ. Ը. Մ.ին՝ դեսպանության հայակերտ շեֆի տրամադրման կապակցությամբ, վերահաստատեց հայրենի իշխանությունների բարձր գնահատականը՝ Հ. Բ. Ը. Մ. և Նապարեան ընտանիքի ազգանուէր գործունեությանը Հայաստանում և Սփիւռքում:

Իր հերթին, պարոն Սեդրակեանը ևս մեկ անգամ հաստատեց Հ. Բ. Ը. Մ.ի վճռականությունը՝ շարունակելու նպատել Հայաստանի հպորացմանն ու բարգաւաճմանը: Հիւրերը վերահաստատեցին նաև Հ. Բ. Ը. Մ. և Նապարեան ընտանիքի շարունակական օժանդակության պատրաստակամությունը Լիբանանում Հայաստանի դեսպանությանը:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

20 Օգոստոս 2002 թ.

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● **ԻՍՐԱԵԼԻԱՆ** օդակառավարները երկն թռիչքներ կատարեցին Մազարէհ Երզնկայի, ԲՖարաջա-յի և Արեւմտեան Պեթա-յի վերել, ուր կատարեցին կեղծ յարձակումներ:

Դիմադրությունը հաղորդագրության մեջ յայտարարեց, որ իր ուժերը հակաօդային կրակ բացած են թշնամի օդանավներին վրայ:

● **ՆՈՐ ԶՐԴԱՐԱՆԻ** նախագահ Նեպոլի Պրերի երկն թռիչքներ կատարեցին Լիբանանի մեջ Կապոնի նոր դեսպան Սիմոն Նաթթոմը:

Պրերի այցելեց նաև Լիբանանի մեջ Չիլիի դեսպան ՕՖէտ Նարմաժի, որոնք Լիբանանի մեջ գործունեությունը կ'ավարտի:

Պրերի ընդունեց կենտրոնական նախարար Միշել Մուսան, որոնք հետքնարկեց քաղաքական վերջին իրադարձությունները:

Պրերի հանդիպումներ ունեցավ նաև խորհրդարանի փոխ նախագահ Էլի Շերզլիի և երեսփոխաններ Անթուան Ղանիյի, Անուար Նաիլի, Քասէմ Հաշմի և Ալի Հասան Նաիլի հետ:

● **ԿՐԹՈՒԹԵԱՆ** և Բարձրագույն ուսման նախարար Ապտէլ Ռահիմ Մրատ երկն նախագահեց Լիբանանեան Համալսարանի ինքնաբերական մասնաճյուղի ղարեցակա մարզական մասնաճյուղի մր ժողովի մր, որոնք ներկայ էր երիտասարդության և մարմնակրթության նախարարության ընդհանուր տնօրէն Ջայտ Նիքաի:

Ներկայացուցին Իվ Տրսան և ալ պատասխանատու պաշտոններ ունեցող անձնակազմի անդամներ:

Մրատ անհրաժեշտ նկատեց Լիբանանեան Համալսարանի ինքնաբերական մասնաճյուղի հարկումը և հիմնական նկատեց զայն անգամ մր ևս կարենալ բարգաւաճելու Համար:

Միև կողմէ, Մրատ ընդունեց Լիբանանի մեջ Եգիպտոսի դեսպան Հաթեմ Սէյֆ էլ Նասրի Հրաժեշտի այցելությունը:

Նասրի գրուատիքով արտայայտեց Լիբանանի մեջ արժանացած իր հիւրընկալության մասին և գոհունակություններն յայտնեց լիբանանցի բոլոր պաշտոնատարներին ցուցաբերած օժանդակություններն:

Մրատ նախագահեց նաև կիրակի, 25 Օգոստոսին Լիբանանի մեջ կայանալիք արաբական աշխարհի ղարեցակա մարզական մասնաճյուղի մր, որոնք ներկայ էր երիտասարդության և մարմնակրթության նախարարության ընդհանուր տնօրէն Ջայտ Նիքաի:

Նշեալ մարզական մրում պիտի մասնակցեն 15 արաբական երկրներ: Բարգաւաճող սերունդի պիտի ունենան Պէյրուսի մարզական աւանի մեջ:

● **ՊԵՏԱԿԱՆ** նախարար Թալալ Արսլան երկն ընդունեց Լիբանանի մեջ Փաքիստանի դեսպան Նաիլ Միք, որոնք հետքնարկեց երկկողմանի յարաբերությունները, ինչպէս նաև շրջանային հարցեր:

Հանդիպումէն ետք Միք բարձր գնահատեց Լիբանան - Փաքիստան առեւտրական յարաբերությունները և բար, որ անոնք բարելուում արժանագրած են երկու երկրներու միջև ստորագրուած փոխ գործակցության վերջին Համաձայնագրի լոյսին տակ:

Քննարկուեցան նաև Հնդկաստան - Փաքիստան լարուած վիճակը և որեւէ վայրկեանի պայթումի ենթակա կացությունը:

Արսլան անդրադառնալով Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքը սեղանի վրայ հանաւորող Լիբանանեան կարճակետով, մտահոգութիւն յայտնեց, վստահեցնելով, որ այդ գործունեությունները իրեն հետեանք շրջանը կրնայ յառաջիկայ 50 տարիներու ընթացքին անկայուն մնալ:

● **ՄԱԶՆՈՒԹՈՎ** բանող պատերու սեփականատէրերու սենտիքան երէկ ինդրեց իշխանութեան պետերէն վերաքննուած ենթակա կէ 14 հոգիէն պակաս փոխադրակառու աշխատանքի կասեցման որոշումը:

Ժողովը կող ուղղեց խորհրդարանի նախագահ Նեպոլի Պրերի և վարչապետ Ռաֆիք Հարիրի վերատեսուծեան ենթակա կէ պատերու աշխատանքը արգիլելու որոշումը և զօրակցելու:

Շարը՝ էջ 10

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը իր 21 Օգոստոսի թիւով լուսարձակի տակ առած է Քըրնէթ Շահուանի հանդիպումին յաջորդող արձագանգները, Իսրայէլի և Պաղեստինի միջեւ եղած վերջին իրադարձությունները, իրաքեան ընդդիմադիր խմբակի մը կողմէ Պերիին մէջ իրաքեան դեսպանատան գրաման և լիբանանեան ներքին քաղաքական կեանքը լույսող պահպան հարցեր:

«Մուսթաքպալ», «Պաալ», «Թշրին» և «Սաուրա» թերթերը լուսարձակի տակ առած են Սուրիոյ նախագահ Պաշիար Ասատի և Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական կոմիտէի պատուիրակության միջեւ հանդիպումը: Ըստ թերթերու, արժանատի են Սուրիան և Լիբանանը լույսող պահպան հարցեր:

«Նահաբ» ի համաձայն, նախագահ Լահուտ պատրաստակամութիւն յայտնած է երկխօսութիւնը հովանաւորելու քողովը: Ըստ թերթի, Քըրնէթ Շահուանի ներկայացուցիչ յաջողոր քաղաքական և տնտեսական հարցեր պիտի ընդգրկէ:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Քըրնէթ Շահուանի պատուիրակութիւնը շուտով Պաալատ պիտի այցելէ առանց Ամին Ժէմալի և Կապրիէլ Մըրի:

Ըստ «Պայրաք»ի, Պարա եպիսկոպոսը Քըրնէթ Շահուանի հանդիպման անունով ժամադրութիւն ինդրեց նախագահ Լահուտէն: Մեծ պատւիրակութեան մը իրաքի դէմ յարձակումի մերժումը:

«Սաֆիր» նշած է,

թէ իրաքեան անձանօթ խմբակ մը 7 ժամ գրաւուած պահեց Պերիին իրաքեան դեսպանատունը, բողոքելով իրաքի վրայ յարձակման Երեսուրի ընդդիմութեան դէմ:

«Քիֆահ Արապի» ի համաձայն, Պերիին իրաքեան դեսպանատան գրաւումը վերջ գտաւ և գրաւողները ձերբակալուեցան: Պաղատատ ամբաստանեց Ուաշինգթոնն ու թէ Ալիք, իսկ Սպիտակ Տունը դատարարուեց գրաւումը:

«Սաֆիր» այս մասին գրած է, թէ Պաղատատ կըրէ, որ ամբարիկեան և իսրայէլեան զաղտնի սպասարկութիւնները կը կանգնին գործողութեան տիրէ և նշած է, թէ իրաքեան դեսպանատան ուժերը իրականացնողները ձերբակալուեցան:

Պաղատատի և ան հարցին մասին «Պայրաք» նշած է, թէ պատուիրակութեան և իսրայէլեան ապահովական և իսրայէլեան իրաքի միջեւ համաձայնութեան պայմանի օր ետք իսրայէլի բանակը սպաննեց «Ժողովրդային Ըստիք» ղեկավարի տասնհինգերորդ եղբորը: Ըստ թերթի՝ ձակատը խոստացաւ շուտով հակադարձել այս սպանութեան:

Միջպագային այլ իրադարձություններու կարգին «Տար» գրած է, թէ նախագահ Ասատ Հալէպի մէջ ընդունեց Յորդանանի վարչապետը և իրաքահագեց Յորդանանի տրամադրուող ջորի քանակը ւալցնել:

Երկու երկրները վերահաստատեցին իրաքի դէմ յարձակումի մերժումը:

«Քիֆահ Արապի» ի համաձայն, Շիմոն Փերէս յայտարարեց, որ իրաքի դէմ յարձակումի պարագային իսրայէլ իրբեւ լալ պիտուոր» պիտի կէնալ Միացեալ Նա-

խանգներու կողքին: Ապու Նիտալի մահուան մասին «Նահաբ» գրած է, թէ Պաղատատ պաշտօնապէս յայտարարեց, որ Ապու Նիտալ անձնապաւն եղած է և վայն ամբաստանեց Քուէյթի հաշուոյն իրաքի դէմ դաւած ըլլալու յանցանքով: Քուէյթ մերժեց այդ ամբաստանությունը, իսկ Ուաշինգթոն գործունակութիւն յայտնեց Ապու Նիտալի մահուան մասին:

Լիբանանեան իրադարձություններուն մասին «Տար» նշած է, թէ Սարտինիայի մէջ վարչապետ Հարիրի նախարարներուն հետ պիտի քննէ 2003ի պիտեմի նախագիծը: Սինիորա և Ֆլէյխան վաղը կը մեկնին Սարտինիա, իսկ յորիշ նախարարներ անոնց պիտի միանան աւելի ուշ:

«Պայրաք» ի համաձայն, Ղովմի կուսակցությունը քննադատեց վարչական վերջին նշանակումները և ընդհանրապէս կասկածարարութեան գործունեությունը, յիշեցրեց լիբանանեան ձերբակալուեցան: Պաղատատի և ան հարցին մասին «Պայրաք» նշած է, թէ պատուիրակութեան և իսրայէլեան ապահովական և իսրայէլեան իրաքի միջեւ համաձայնութեան պայմանի օր ետք իսրայէլի բանակը սպաննեց «Ժողովրդային Ըստիք» ղեկավարի տասնհինգերորդ եղբորը: Ըստ թերթի՝ ձակատը խոստացաւ շուտով հակադարձել այս սպանութեան:

Միջպագային այլ իրադարձություններու կարգին «Տար» գրած է, թէ նախագահ Ասատ Հալէպի մէջ ընդունեց Յորդանանի վարչապետը և իրաքահագեց Յորդանանի տրամադրուող ջորի քանակը ւալցնել:

Երկու երկրները վերահաստատեցին իրաքի դէմ յարձակումի մերժումը:

«Քիֆահ Արապի» ի համաձայն, Շիմոն Փերէս յայտարարեց, որ իրաքի դէմ յարձակումի պարագային իսրայէլ իրբեւ լալ պիտուոր» պիտի կէնալ Միացեալ Նա-

IT'S Panasonic SUMMER-TIME AGAIN!

Win With Us

L.L. 70,000,000

280 PRIZES including:

- 34" TVs
- DVD Mini Components
- 29" TVs
- 15" TVs
- and Radio Cassette Recorders

WIN

For more information, call: 1(800)734-3467 (9:00-5:00 PM ET/PT) or 1(302)712-1177 (9:00-5:00 PM CT/MT). Fax: (302)712-1177. E-mail: TTC@cypnet.net.lb

This offer is valid from July 8 till September 8, 2002 Under the supervision of the Lebanese National Lottery

ՌԻՐԱՆ ՓԱՌԱՏՕՆ ԵՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ԹՈՂՆՈՅ ԲՈՅՆԻ ՄԷՁ ԸԻՊԷՅԻ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐԵՀԱՑ ՕՐԱՆՈՒԹԵԱՄԻՐ՝ Լ.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ ԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՏԻՆ ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԻԿԻՈՑ

Հովանաւորութեամբ՝ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՆԱՆ ՄԵԾՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՄՊՊԱՍ ՀԵՃԸՄ-Ի ԵՒ ՀԱՄԵՍԱՓԱՅԻ ՏԻԿՆՈՂՄԱՄ ԻՊՐԱԿԻՄ ՀԵՃԸՄ-Ի

Կազմակերպութեամբ՝ «Թոնլիս Քոյնլի» Ինտամակալութեան և Տիկնաց միութեան

ՓԱՌԱՏՕՆԻ ԲԱՑՈՒՄ Հինգշաբթի, 29 Օգոստոս 2002-ին, Երեկոյան ժամը 7:30-ին ԳԵՂԱՐՈՒԿԱՆ ԲԱՑԵՐԱԿԱՆ ՍՒՅՑԱԳԻՐ (MUSICAL SHOW) «ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ»

Կատարողութեամբ՝ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆԻ» մեծ ընտանիքին՝ Ուրբաթ, 30 Օգոստոս 2002-ին, Երեկոյան ժամը 8:30-ին ՀԱՅ ԵՐԱԺԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԱՀԱՆԴԵՍ Կատարողութեամբ՝ ԱՐԱՐԱՏ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ Նուազակցութեամբ՝ ԵՄԻՐ ՏԻՍՉԻՔԻՆԵԱՆԻ

Շաբաթ, 31 Օգոստոս 2002-ին, Երեկոյան ժամը 8:30-ին ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԱՀԱՆԴԵՍ Կատարողութեամբ՝ ՍՈՆԻԿ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ Նուազակցութեամբ՝ ՄԱՆՕ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002-ին, Երեկոյան ժամը 8:30-ին ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԱԺԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԱՀԱՆԴԵՍ Կատարողութեամբ՝ ԼԻՉԱ ՔՉՈՒՐԴԵԱՆԻ Նուազակցութեամբ՝ ՍԵՂՕ ՊԱՀՏԱՍԱՐԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԻՐԻՆ

Մասնաժամը 10.00-ին սկսւալ Ամէն զիշը վերադարձ պահանջած է միայն Տրալ:

ՍՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ՍՈՒՏՔԸ ԱԶԱՏ



ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԱԿՆԱՐԿ

ՀԱՅ ԳԻՐՔԸ, ԸՆԹԵՐՅՈՂԸ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՅԵՐ

Հայ գիրքի նակատագիրը կը վերաբերի մեր ակնարկը:

Երբ գիրք կ'ըսենք, կը հասկանք նաև ընթերցող, հրատարակիչ, հայտ լեզու եւ գրականութիւն: Այսուհանդերձ գիրքը կ'արժեւորուի, երբ տարածուած կը գտնէ: Ընթերցողը գնագուածը կը կատարէ այս դերը, ինքնաբերաբար, լուրջնայն կամ գնահատական արտայայտութիւններով: Ըսինք՝ լուրջնայն, կ'ակնարկենք գրավեցողութիւն մ'օտ գիրքին գտած ընդունելութեան, այսինքն՝ սպառումն չափանիշին, տարողութեան: Միւս կողմէ, յանձնարու ընթերցողը իր կարգազատ գիրքին մասին տեղեկութիւններ կու տայ իր շրջապատին: Այդ տեղեկութիւնները կ'ըլլան երկու իմաստով. գովեստ կամ ընդադատութիւն: Անկեղծ եւ անկողմնակալ ընթերցողը կը կատարէ իր գնահատականը, որ ինքնին ծանուցում մըն է՝ դրական եւ ժխտական իմաստներով:

Այս օրերուն, երբ համայնքը իր գարնանահարաշ երեւոյթներով եւ միջամտութիւններով գրաւած է մարդկութեան ուշադրութիւնը, գուցէ շատեր ծիծաղելի գտնեն ԳԻՐՔ հասկացողութեան մասին խօսիլը: Ինչքանիցս յայտարարեալ «տար» ժամանակաշրջանին գուցէ թուի ծիծաղելի, որովհետեւ քանի մը կոնակի հետ շփուելով կարելի պիտի ըլլայ վեպեր կարդալ, կամ՝ «ուզուած գրութիւնդ աչքերուդ առջեւ կ'ունենան»: Անշուշտ ճիշդ բնորոշում մը կրնայ ըլլալ այս, բայց չի կրնար փոխարինել ափերուդ մէջ բռնած հատորին փոխանցած ջերմութիւնը, կենդանի օրինակով ընթերցանութեան հետեւելու բնական վայելքը:

Այս հարցին առնուած վկայութիւն մը կ'ունենանք մէջքերէլ հուս: Ծարբաբ, 10 Օգոստոսի յետմիջօրէին, յատուկ յայտագիրով մը Հայաստանի պատկերասփիւռը հարցազրոյց մը անկողի յայտարարեց: Անոնց ցաւօք կ'արտայայտուէին, թէ Հայաստանի մէջ ընթերցանութեան թափը կասած է, գիրքեր չեն վաճառուիր, ընթերցողներ գիրք չեն գներ, որովհետեւ գիրքը կը գտնեն սուղ, իսկ իրենք դրամ չունին: Հարցազրոյցով կատարուող այս ընդարկումը մեզի յիշեցուց նաեւ մեր լիբանանահայ ընթերցողին վերաբերումը:

Ինչ վիճակը կը պարզէ այսօր հայ գիրքը, որ տակաւին ունի իր պաշտպանները: Մեծ Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի տպարանը եւ այս շրջապակին մէջ կատարուած տարեկան գիրքի ցուցահանդէսները: Համագայիի «Վահէ Իթեան» տպարանը եւ անոր կից գրատպարանը: Անձնական նախաձեռնութեամբ բանող հրատարակչականներ, գիրքերու հրատարակութիւն եւ այլ կարգի կամ ձեւի աշխատանքներ՝ հայ գիրքը տարածելու: Մեր գրական ամսագիրներուն վիճակը ալ միեւնոյն ճակատագիրի ենթակալ է: Ընթերցողի բացակայութիւն, որ կը նշանակէ հայ գիրքի անտեսում:

Վերել յիշեցիքը երեւանի պատկերասփիւռէն հետափոխուած հարցազրոյցը, որպէսզի հանրութեան սեփականութիւնը դառնայ տագնապ մը, որ հայ մշակոյթի ակնում կը նշանակէ: Մեկնելով այս օրինակէ հարցում մը՝ Պէյրուի մեր ծայնասփիւռի կայաններուն, հայ պատկերասփիւռի կայանի պատասխանատուներուն: Արդեօք փափարած են յայտագիրներ անկողի հայ գիրքի մասին՝ ծանօթացնելու համար գոնէ հրատարակչականին գործունէութիւնը, գրողին աշխատանքները եւ նման հարցեր: Կարծես մեզի է հայ գիրքին եւ հայ գրողի մասին խօսիլը: Կայ - չկայ՝ երզողներ կան, միութեանկան կենցաղի յատկացուած պարբերական լրատուութիւններ: Փակագծի մէջ ըսենք, որ արդէն գաղութին մէջ ծայնասփիւռուող երեք երկուստիւսային կայաններ փակելեցան ամիս մը առաջ, որովհետեւ պետական արտոնութիւն չունէին: Հիմա ունինք պաշտօնական մէկ ծայնասփիւռ, ուրկէ բնու չենք լսեր որեւէ ակնարկ հայ գիրքին մասին:

Եթէ հայ գիրքին մասին խօսող ըլլայ, անշուշտ ընթերցողներ պիտի չունենանք: Եղածն է՛ն ալ պահելու հոգն իսկ չենք ընել:

Հոս կ'արժէ յիշել «Անտառի շարդին» ասացումները:

- «Անտառին կ'ըսեն. շարդարներ կու գան կացիններով գիմուած, ինչ պիտի ըլլայ ձեր հակազդեցութիւնը: Ծառերը կը պատասխանեն»:

- «Ինչ կրնանք ընել, մեզ կտրելու պատրաստ կացիններուն կոթը մեզմէ ե...»:

Զառակս ինչ ցուցանէ:

56 ԸՆՏՐԱՏԱՐԱԾ ԲԱՅԻՆ 3ԱՆՁՆԱԽՈՒՄ ԲԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրէնքը, նախագահ Ռոպէրթ Քոչարեան 16 Օգոստոսին հրամանագիրով մը նշանակեց տարածքային ընտրական յանձնախումբները: Մարզային ընտրական յանձնախումբերու փոխարէն:

Այսպէսով, ընտրատարածքային ընտրական յանձնախումբերէն 33ին նախագահութիւնը ստանձնեցին նախագահ Ռ. Քոչարեանի կողմէ նշանակուած անձնաւորութիւններ, 11 յանձնախումբերու նախագահները: Միասնութիւն իմրակցութեան անդամ են, Հ.Յ.Դ. ունի մէկ, Օրինաց երկիր՝ 3, իսկ Համայնավար կուսակցութիւնը՝ 2 նախագահ-անդամներ:

Յանձնախումբերու փոխ նախագահութիւնը բաժնակցուած հետեւեւոր ձեւերով: Նախագահ՝ Քոչարեանի կողմէ նշանակուած՝ 5 ներկայացուցիչ, 8 հոգի՝ Միասնութեան:

22՝ Հ.Յ.Դ.էն, 13՝ Օրինաց երկիրէն, 2՝ Համայնավար կուսակցութեանէն, 3՝ Իրաւունք եւ Միաբանութեան 16 Օգոստոսին հրամանագիրով մը նշանակեց տարածքային ընտրական յանձնախումբերու փոխարէն:

56 յանձնախումբերու քարտուղարական պաշտօնին համար 28 յանձնախումբերուն մաս կազմեցին Քոչարեանի կողմէ նշանակուածներ, Միասնութեանէն՝ 15, Հ.Յ.Դ.էն՝ 5, Օրինաց երկիրէն՝ 5, ԱժՄէն՝ 2, իսկ Համայնավար կուսակցութեանէն՝ մէկ ներկայացուցիչ:

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԵՐԸ՝ 2002Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄԵԱԿԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ազգային վիճակագրական ծառայութեան համաձայն, 1 Յունիսի դրութեամբ Արցախի բնակչութեան թուաւորը 144,500 հոգի էր: Դրանք են տարեկան ծնունդները, որոնց 800 մարդով:

Յունուարէն Յունիսի ամիսներուն հանրապետութեան մէջ ծնունդներուն թիւը եղած է 1012, ինչ որ անցալ տարուան նոյն ժամանակաշրջանի համեմատ կրճատուած է 125ով կամ 11 առ հարիւրով: Նոյն աղբիւրի համաձայն, նշուած ժամանակահատուածին մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բնակչութեան բնական աճը դրական է եւ կազմած է 359 հոգի, սակայն 2001 թուականի նոյն ժամանակաշրջանի համեմատ բնակչութեան աճը նուազած է 62,4 առ հարիւրով կամ 216 հոգովով:

Նոյն տուեալներով, այս տարուան առաջին կիսամեակին Արցախ մուտք գործողներու թուաւորը 848 հոգի էր, իսկ մեկնողներուն՝ 375: Մարդկային թիւի աճը կազմած է 473 մարդ, որ 2001ի նոյն ամիսներուն բաղդատած՝ նուազում արձանագրած է 350 մարդով կամ 42,5 առ հարիւրի հաշուով:

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆՈՐ ՕՐԷՆՔԻՆ ՄԷՋ ԱՆՀՐԱՔԵԾՏ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի նախագահին առնթեւ տեղական ինքնակառավարման հարցերու յանձնախումբի նախագահ Ալեքսան Յարութեան 16 Օգոստոսին տեղի ունեցած յանձնախումբի նիստին ընթացքին յայտնեց, որ Հայաստանի Ազգային ժողովի վերանախընթացի արտաքին կր շարունակեց զալ, եւ ակնյայտ է, որ օրէնքը փոփոխութեան կարիք ունի: Այս ծիրին մէջ ան նշեց, որ անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ մը՝ եկած առաջարկները ուսումնասիրելու համար:

«Փոփոխութիւնները անհրաժեշտ կը համարեմ ոչ միայն ես, այլեւ՝ համայնքագուտները: Կը կարծեմ, որ նաեւ Եւրոպական խորհուրդին կողմէ առաջարկներ կ'ըլլան» օրէնքը բարեփոխութեան ենթարկելու իմաստով», ըսաւ Ա. Յարութեան:

ՍԻՒՍ ԿՈՂՄԷ, Հայաստանի նախագահին առնթեւ տեղական ինքնակառավարման հարցերու յանձնախումբի նիստին ընթացքին քննարկուած են նաեւ Ազգային գործի երեք քաղաքներու՝ Գիւմրիի, Վանաձորի եւ Սպիտակի մէջ տիրող իրավիճակին առնչուող հարցերը: Ալեքսան Յարութեանի յայտնած է, որ Ազգային գործի շինարարական աշխատանքներուն հարցերը արդէն իսկ լուծուած են: «Ներկայիս աշխատանք պէտք է տարուի, որ Ազգային գործի երեք քաղաքներուն մէջ ստեղծուին ներդրողներուն համար նպատակոր պայմաններ՝ գործարաններ կառուցելու համար, որովհետեւ պետութիւնը

ի վիճակի չէ գործարաններ կառուցելու», ըսած է ան: Ա. Յարութեանն անտես ժողովին մասին յայտնած է, որ մէկուկէս տարի ետք, երբ շինարարական աշխատանքները աւարտին, Ազգային գործի քաղաքները, մասնաւոր՝ Սպիտակն ու Գիւմրին, կրնան ըլլալ գործարաններու քաղաքներ:

ՊԱՅԹՈՒՄ՝ ԿԱՆԱՋՈՐԻ ՄԷՋ

16 Օգոստոսին անյայտ առարկայի մը պայթումին պատճառով երկու անչափահաս վանաձորցիներ՝ Արկարի Եղաթեան եւ Վահան Գէորգեան մահացած են, իսկ Մանիկ Ուշատրեան վիրաւորուած եւ հիւանդանոց փոխադրուած է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱԻՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստան Ռազմավարական եւ Ազգային Հետազոտութիւններու Հայկական կեդրոնին մէջ 16 Օգոստոսին տեղի ունեցած է Հայաստանի դրամատային համակարգին եւ դրամական քաղաքականութեան հիմնական հարցերու նուիրուած համագումար մը: Հայաստանի կեդրոնական Դրամատան նախագահ Ջիգորան Սարգսեան համագումարի մասնակցողներուն ծանօթացուցած է Հայաստանի դրամատային համակարգին ներկայ իրավիճակը, այդ մարզին մէջ կատարուած իրագործումները եւ դիմագրուած հարցերը՝ նշելով, որ համակարգը, հակառակ բազմաթիւ անլուծելի հարցերու, շարունակ զարգացումի մէջ է: Ըստ Հայաստանի կեդրոնական Դրամատան նախագահին, ներկայիս աշխատանք պէտք է տարուի համակարգին բարելաման համար, որուն աւարտը կը նախատեսուի 2005ին:

Տ. Սարգսեան անդադարձած է նաեւ Հայաստանի դրամատուներուն դիմագրուած հիմնական հարցերուն: Անոր կարծիքով, տնտեսագէտները յաճախ դրամատուները կը նկատեն իրենց գուտ դրամական միջոցներ մատակարարող հաստատութիւններ՝ չմտահոգեցնելով այդ դրամական գումարները վերադարձնելու անհրաժեշտութեամբ: Զեկուցումներէն ետք, մասնակցողները քննարկած են Հայաստանի դրամատային համակարգի զարգացման խնդրներուն յաղթահարման առնչուող հարցերը, ինչպէս նաեւ՝ դրամական քաղաքականութեան մտեցումները:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌՁԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեւոր թիւերու.- 258526, 260115 եւ 241274:

Ս. ԷԶՄԱԾԻՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖԻՆԼԱՆՏԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԵՏԻՆ ՀԵՏ

17 Օգոստոսին Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս Ս. Էջմիածինի մէջ Հանդիպում մը ունեցաւ Ֆինլանտայի Աւետարանական Լուստերական եկեղեցւոյ պաշտօնական պատուիրակութեան հետ՝ գլխաւորութեամբ Ֆինլանտայի եւ Թուրքիայի արքեպիսկոպոս Ճուքա Փարմայի:

Խօսք առած է Ֆինլանտայի արքեպիսկոպոսը՝ յոյս յայտնելով, որ Հայաստան այցելութեան երեք օրերը զօրացնեն հոգեւոր եղբայրութիւնը եւ երկու եկեղեցիներուն յարաբերութիւնները:

Երկու հոգեւոր պետերը իրարու ներկայացուցած են Հոգեւոր խորհուրդի անդամները եւ թեմակալ առաջնորդները: Պաշտօնական ընդունելութեան էն ետք անոնք այցելած են խոր վիրայ կը կատարած են միացեալ աղօթք:

«ԵՐԿՐԱՄԱՍ»Ը՝ ՀԱՐԱԻԱՅԻՆ ՌՈՒՍԻՈՅ ԼԱՒԱԳՈՅ ԱՉԳԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Քրասնոտարի շրջանի հայկական «Երկրամաս» թերթը վերջերս յայտարարուած է հարաւային Ռուսիոյ մէջ լոյս տեսնող լաւագոյն ազգային պարբերականը: Այս օրոշումը տուած է «Հարաւային Ռուսիոյ անկախ լրագրողներ»ու ընկերակցութիւնը:

Որոշումին մէջ ըսուած է, որ «Երկրամաս»ը միակ թերթն է, որ իսկապէս անկախ է եւ հետեւողականօրէն կը պաշտպանէ հարաւային Ռուսիոյ հայերուն շահերը:

Աւելցնենք, որ այս մէկը «Երկրամաս»ի առաջին մրցանակը չէ: 2000ին թերթին կայքէջը նկատուած է ուսական Սփիւռքի լաւագոյն էջը:

ԿԱՆԱՋՈՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՐ ԹԵՐԹ՝ «ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿ»

Վերջերս Վանաձորի մէջ սկսած է հրատարակուիլ «Հրաշամանուկ» մանկապատանեկան պարբերակի մասնակցութեան մասին:

Պատանիները հետաքրքող նիւթեր գետեղուած են «Մեծերը փոքրերի մասին», «Միծաղում եմ աշխարհի երկխառնքը», «Զարմանահարաշ բնաշխարհ» եւ այլ խորագիրներու տակ:

«Հրաշամանուկ» թերթի խմբագիր արձակագիր Արարատ Գիւլբաբեան այս հրատարակութեամբ նպատակ ունի մամուլի հանդէպ հետաքրքրութիւն յարաւարանել պատանիներուն մէջ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ՎԱՆԱՋՈՐԻ ջիմիաբանական համալիրի գործունէութիւնը պիտի վերսկսի յառաջիկայ Հոկտեմբերին: Ներկայիս կ'ուսումնասիրուին Հայաստանի ջիմիական արտադրանքը աւանդական՝ յատկապէս ոսուական շուկաներուն մէջ սպառելու կարելիութիւնները:

● ՏԱԻՈՒՇԻ մարզի Նոյնաբերեան քաղաքի մէջ հիմնուեցաւ մանկական մարզա-առողջարարական կեդրոնը, քանատական «Միտա» կազմակերպութեան նիւթական հովանաւորութեամբ, գործարկութեամբ մարզի «Լուսածիր» հասարակական կազմակերպութեան:

Նորարաց կեդրոնին ծառայութիւններէն ձր կերպով կ'օգտուին հաշմանդամ երեխաներ: Յունիսին հիմնուած այս ծրագիրը ունի շարունակական բնոյթ: Նորաստեղծ կեդրոնին կից ներկայիս կը կառուցուին բացօթեայ հրապարակ մը եւ հանրաշքի ու հանգստեան յարմարութիւններ:

● ԱՐԱԳԱԾՈՆՆԻ մարզի Արաքածի ընթացում 15 Օգոստոսի դրութեամբ թիրախ դարձաւ անհայտէպ փոթորիկի եւ կարկուտի: Տարբերէն առաւելարք տուեցին Մարկոսյանի, Լեռնապար, Միլթար, Գեղարոտ եւ Բերքառատ գիւղերը: Արմատայիլ եղան հաստարուն ծառեր, քանդուեցան շինութիւններ: Վնասին ճշգրիտ չափը ներկայիս կ'ուսումնասիրուի մարզային յանձնախումբին կողմէ:

Հ. Յ. Գ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻԶՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Կիրակի, 18 Օգոստոսին, Լոռիի մարզի Վահագնաձոր գիւղի մօտակայքը բացուեցաւ Հ. Յ. Գ. Հայաստանի Երիտասարդական Միութեան Լոռիի եւ Շիրակի մարզերու մասնաճիւղերուն միացեալ եռօրեայ բանակումը, որուն մասնակցեցան 30 պատանիներ եւ պարմանիներ:

Բանակումի բացման հանդիսութեան ներկայ եղան Հ. Յ. Գ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ Վաղարշակ Մարգարեան, Հ. Յ. Գ. Լոռիի մարզային կոմիտէի անդամներ եւ հիւրեր: Եռօրեայ բանակումը ունեցաւ դասախոսութիւններ, արշաւներ եւ ուսուցողական այլազան ձեւաւարկներ:

www.homenetmentcentral.com

ՀԱՄԲԻԿ ԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅՆԸ
HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 4450
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԶՈՊԵՐ

Լիբանանեան կեանքի երևոյթներ

ԲՋԻՋԱՅԻՆԸ՝ ՄԵՐՕՐԵԱՅ ԱՆՓԻՍԵԼԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ, ԹԷ՛...



Այսօր լիբանանեան իրականութեան մէջ անպատասխան մնացած հարցաբան հարցումներուն կարգին է «ինչ՞նչ ըջիջլային հեռաձայն կը գործածենք»: Իրականութեան մէջ գրեթէ ոչ ոք կրնայ յստակ, տրամաբանական եւ համոզիչ պատասխան մը տալ այս հարցումին, եւ կան շատեր, որոնք երբեք չեն մտածած այս մասին, որովհետեւ խորքին մէջ լիբանանցին այսօր առանց յստակ պատճառի կրնայ ըջիջլային հեռաձայն ունենալ եւ հակառակ զանազան դժուարութիւններու իբրեւ անհրաժեշտութիւն կրեի իրեն հետ:

Բջիջլային հեռաձայնի գաղափարը ծագում առած է 1947 թուականէն եւ 1973ին, առաջին անգամ ըլլալով, իբրեւ շօշափելի, բաւական զարգացած եւ ամբողջական հեռաձայն գործածուած է մարդոց կողմէ: Այդ օրերուն այս նոր սարքը կը գործածուէր շատ քիչ թիւով անձերու կողմէ եւ ունէր յստակ նպատակներ:

Ընդը քառորդ դար ետք, այսօր, մեր իրականութեան մէջ ըջիջլային հեռաձայնի ներկայութիւնը եղած է ոչ միայն անխուսափելի, այլեւ՝ անհրաժեշտ:

Ընտանիքի մը անհրաժեշտութիւններուն՝ ինքնաշարժին, համարագրիչին, հեռատեսիլին կարգին անցած է ըջիջլային հեռաձայնը, որ գոյութիւն ունի գրեթէ ամէն տան մէջ:

Այս սարքին գործածութեան չափանիշները գրեթէ ամբողջութեամբ խախտած են ներկայիս: Անիկա խորքին մէջ ստեղծուած է բժիշկներու, շատ յաճախ իրենց գրասենեակէն դուրս մնացող առեւտրականներու աշխատանքի դերացման եւ մատչելիութեան համար: Ասոնց պարագային ըջիջլային հեռաձայնի մը գոյութիւնը իսկական անհրաժեշտութիւն մըն է, որովհետեւ անոնց ներկայութիւնը կամ անոնց հետ կապ հաստատելու կարելիութիւնը կրնայ փրկել կեանք մը կամ լուծել բարդ հարց մը: Սակայն մեր օրերուն այդ գաղափարը գրեթէ չքացած է, եւ ըջիջլային հեռաձայններ կը գործածեն բժիշկն ու հիւանդանոցին պահակը, առեւտրականն ու անոր գործակալը, զատառիցիսներուն տնօրէններն ու անոնց դռնպանները...

Լիբանանի մէջ ո՛ր որ ալ գտնուիս, ինչ միջավայրի մէջ ալ ըլլալս, անխուսափելիօրէն պիտի լսես բարձր կամ ցած, հաճելի կամ անհաճոյ գանազան եղանակներ չնչեցնող ըջիջլային հեռաձայնին զանգը, որ մնայուն կերպով ներկայ է ամէն տեղ՝ գրասենեակներուն, հաստատութիւններուն, նպարավաճառներուն, հանդիսասրահներուն եւ եկեղեցիներուն մէջ:

Բջիջլային հեռաձայն ունենալու նպատակը այսօր ունի զանազան երեսներ եւ ուղղութիւններ: Այս սարքը բնականաբար կը շարունակէ մեծապէս ծառայել բժիշկին, առեւտրականին, հաստատութեան մը տնօրէնին, շրջուն վաճառորդին կամ այլ անձերու, որոնք անմիջական կարիքը ունին անոր, սակայն կայ նաեւ միւս երեւոյթը, որ միայն ու միայն կապ ունի ցուցամուտիցեան եւ վերջին նորութիւններուն հետ կապ պահելու հետ:

Պայուսակներէն դուրս՝ մարդոց փոխուած մէջ հաստատուած ըջիջլային հեռաձայնները արդէն իսկ իրենց գտնուած վայրին մէջ կը փաստեն, թէ իրենք շատ հեռու են իրենց վստահուած գործը կատարելէ: Բջիջլային հեռաձայնի ընկերութիւններուն կողմէ տրուած այլեւայլ դիւրութիւններու բերումով լիբանանցիները վերջին տարիներուն աւելի եւս սկսան «օգտուել» այս շրջուն հեռաձայններէն եւ անիկա դարձաւ գրեթէ ամէն քաղաքացիի անբաժան մէկ մասնիկը:

Որեւէ գնով, նոյնիսկ նիւթական զանազան գրկանքներու ու դժուարութիւններու ի գին ըջիջլային հեռաձայններ ունենալը դարձած է լիբանանցիին նորագոյն «հիւանդութիւններէն» մէկը:

Կարելի չէ, թէ քաղաքացին չի կրնար հանգիստ կերպով ըջիջլային հեռաձայնի ամսական իր պարտքերը վճարել, մեծ մտահոգութիւն է չէ այն, թէ ըջիջլային հեռաձայնի գիծը պահելու եւ իր առօրեային մէջ անոր օգուտները վայելելու համար ինչ կրնայ պարտքեր դրիշլ, մինչեւ իսկ հարց չէ այն իրողութիւնը, թէ ինք ընտանիքին կենսական անհրաժեշտութիւններէն կը գեղէ նման հեռաձայնի մը ծախսերուն հասնելու համար, կարելի չէ այն, թէ ինչ ըջիջլային հեռաձայն մը ունենայ եւ «անհրաժեշտութեան» պարագային ներդի չմատնուի:

Փաստերն ու իրողութիւնները կու գան ցոյց տալու, որ այդ անհրաժեշտութիւնները շատ կը տարբերին մէկ անձէն միւսը: Առեւտրականին համար այդ բառը կը նշանակէ կապուել այլ առեւտրականներու

կամ գործակիցներու հետ, երբ ինք գրասենեակէն դուրս է յաճախ, եւ իրեն հետ կապի հաստատուածն է կայսքալ կը շատ մը հարցեր: Բժիշկին համար անիկա անհրաժեշտ է, որպէսզի շտապ օգնութեան եւ խնամքի կարիք ունեցող հիւանդներն ու պարագաները կապուին իրեն: Պարզ պաշտօնային մը համար անհրաժեշտութիւն է տուն հեռաձայնը՝ նախքան հասնելը, որպէսզի տնեցիները ճաշը պատրաստեն, կամ՝ երբ զգայ ընկերներուն հետ խօսելու եւ միտքէն անցած բան մը պատմելու «կարիքը», ան գրկուած չմնայ: Կնոջ մը համար անիկա կարեւոր է, որպէսզի երբ շուկան բան մը հաւնի, կարելիութիւն ունենայ ամուսինին հետ խօսելու եւ այդ հազուատը գնելու կամ չգնելու հարցին մասին եւ կամ ընկերուհիի մը հարցնելու, եթէ այդ գոյնը կը վայելէ իրեն եւ կամ տուն հեռաձայնով հարց տայ, թէ զաւակները ինչ կ'ուզեն ճաշել, եւ թէ տան մէջ ինչ պակաս առարկաներ կամ անըղեղներ կան: Երիտասարդներն ու երիտասարդուհիները այս «հարց» հեռաձայնին անհրաժեշտութիւնը կը տեսնեն իրենց ընկերներուն կապուելու, վերջին լուրերը առնելու եւ գիշերուան երթալիք վայրը ճշդելու մէջ: Շարքը երկար է ու անհատուած, սակայն ասոնց մէջ ամէնէն դիպուկն ու տարածուածը «ունենա՛մ, չես գիտեր» ինչ կ'ըլլայ» պատճառն է:

Ասոնց վրայ կու գայ աւելնալու նաեւ այլ սովորութիւն մը՝ «միտս քոյ» պարագան, ըստ որուն, խօսելու անհրաժեշտ իւրիքներ չունեցողը մէկ անգամ կը հեռաձայնէ միւսին, ապա կը մարէ, որպէսզի վերջինը կրկին իրեն հեռաձայնէ եւ խօսակցին: Այս երեւոյթը բնական տարածուած է լիբանանցիներուն մօտ եւ հասած է օգտագործումի եւ մուրացականութեան աստիճանին: Շատ յաճախ անիմաստ պատճառնի մը համար է, որ կ'ըլլան այս «միտս քոյ»երը, որոնց պատճառով կրնան նոյնիսկ անհամութիւններ եւ տարակարծութիւններ ստեղծուիլ բարեկամներու եւ ընկերներու միջեւ:

Լիբանանի ըջիջլային հեռաձայնի ընկերութիւններուն փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, իւրաքանչիւր ընկերութիւն գիծ տրամադրած է շուրջ 770 հազար մարդոց եւ այդ թիւը օրէ օր կ'աւելնայ: Լիբանանի զանազան շրջաններուն մէջ գետեղուած ըջիջլային հեռաձայնի այնպէս ընդարձակութիւնը հասած է 1452ի:

Վիճակագրութիւններու համաձայն, ըջիջլային հեռաձայն ունեցող իւրաքանչիւր լիբանանցի տարեկան միջին հաշուով 900էն հազար տոյար կը տրամադրէ անոր:

2000ին «Լիպասա» ընկերութեան արձանագրած շահը եղած է 292.836.65000 լ.օ., իսկ «Սելիս»ի շահը՝ 180.367.634 տոյար:

